Բոբիկ ջուր մի էրա

Բոբիկ ջուր մի էրա, բոբիկ ջուր մի էրա,
Փուշ կըմտնի ոտդ, ջանեջան, կեղնի յաման յարա:

1. Ձեր բաղի դուռը բաց է, բոբիկ ջուր մի էրա,
   Ոտներդ շաղով թաց է, բոբիկ ջուր մի էրա,

Փուշ կըմտնի ոտդ, ջանեջան, կեղնի յաման յարա:
Փուշ կըմտնի ոտդ, ջանեջան, կեղնի յաման յարա:

2. Այ տղա, բաղի միջին, բոբիկ ջուր մի էրա,
   Ոտներդ շաղի միջին, բոբիկ ջուր մի էրա,

Փուշ կըմտնի ոտդ, ջանեջան, կեղնի յաման յարա:
Փուշ կըմտնի ոտդ, ջանեջան, կեղնի յաման յարա:

3. Ջաղջի առաջը գոլ է, բոբիկ ջուր մի էրա,
   Հագածդ կարմիր սոլ է, բոբիկ ջուր մի էրա,

Փուշ կըմտնի ոտդ, ջանեջան, կեղնի յաման յարա:
Փուշ կըմտնի ոտդ, ջանեջան, կեղնի յաման յարա:

4. Ես ծարավ եմ, ջուր չկա, բոբիկ ջուր մի էրա,
   Սարերին ախպուր չկա, բոբիկ ջուր մի էրա,

Փուշ կըմտնի ոտդ, ջանեջան, կեղնի յաման յարա:
Փուշ կըմտնի ոտդ, ջանեջան, կեղնի յաման յարա:

5. Ես ղուշ եմ թևս դեղին, բոբիկ ջուր մի էրա,
   Ման գուկամ նանիս գեղին, բոբիկ ջուր մի էրա,

Փուշ կըմտնի ոտդ, ջանեջան, կեղնի յաման յարա:
Փուշ կըմտնի ոտդ, ջանեջան, կեղնի յաման յարա:

6. Նստել ես հատիկ պատիկ, բոբիկ ջուր մի էրա,
   Ունքերդ նռան հատիկ, բոբիկ ջուր մի էրա,

Փուշ կըմտնի ոտդ, ջանեջան, կեղնի յաման յարա:
Փուշ կըմտնի ոտդ, ջանեջան, կեղնի յաման յարա:

7. Պարբաշի, պարըդ քաշի, բոբիկ ջուր մի էրա,
   Ետ դառի, յարիդ աշի, բոբիկ ջուր մի էրա,

Փուշ կըմտնի ոտդ, ջանեջան, կեղնի յաման յարա:
Փուշ կըմտնի ոտդ, ջանեջան, կեղնի յաման յարա: